Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1178 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակներում ազգային գրադարանային հավաքածուի (այսուհետ՝ հավաքածու) տարահանման ու պաշտպանության միջոցառումների կազմակերպմանև իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգումօգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ***տիրապետող կազմակերպություն՝*** հավաքածուի կազմում ընդգրկված արժեքները տիրապետող կազմակերպություն.

2) ***անվտանգ տարածք՝*** վտանգավոր տարածքից դուրս գտնվող՝ հավաքածուի տեղաբաշխմանև պահպանման համար նախապատրաստված տարածք.

3) ***պահպանման կազմակերպություն՝*** Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ սահմանված կարգով ընտրված կազմակերպություն (կազմակերպություն- ներ), որտեղ ապահովված են հավաքածուի պահպանության համար անհրաժեշտ՝ սույն կարգի 26-րդ կետի աղյուսակում ներկայացված բոլոր տեխնիկատնտեսական պայմանները.

4) ***լիազոր մարմին՝*** մշակույթի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող գործադիր իշխանության հանրապետական մարմին.

5) ***տարահանում՝*** սրտանկարգ իրավիճակներում վտանգավոր տարածքից հավաքածուի

կազմակերպված դուրսբերումն հավաքածուի պահպանման համար նախապատրաստված անվտանգ տարածքում ժամանակավոր տեղաբաշխում.

6) ***տարահանման երթուղի՝*** տարահանվող հավաքածուն տիրապետող կազմակերպությունից մինչև պահպանման կազմակերպությունը և պահպանման կազմակերպությունից մինչև տիրապետող կազմակերպությունը միացնող ճանապարհ (ճանապարհահատված).

7) ***համապատասխան մասնագետ՝*** տիրապետող կազմակերպության հավաքածուի փաթեթավորմանն և տարահանման համար պատասխանատու աշխատող.

8) ***փաթեթավորում՝*** հավաքածուի մեկուսացումն արտակարգ իրավիճակներում առաջացած ֆիզիկական վնասակար ազդեցություններից.

9) ***վտանգավոր տարածք՝*** հավաքածու նեղառող որոշակի տարածք կամ օբյեկտ, որտեղ տեխնածին և տարերային աղետների (հրդեհ, խոշոր վթար, ուժգին փոթորիկ, երկրաշարժ, հեղեղում, սողանք) հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ հավաքածուի վրա բացասաբար ազդող գործոններ.

10) ***մասնակի տարահանում՝*** Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 1230-Ա որոշմամբ հաստատված Ազգային գրադարանային հավաքածուի գրացուցակում ընդգրկված գրավոր հուշարձանների և փոքրաքանակությամբ արժեքված փաստաթղթերի տարահանում.

11) ***ընդհանուր տարահանում՝*** հավաքածուի տարահանումն ամբողջությամբ:

3. Հավաքածուի տարահանումը և պաշտպանությունն անվտանգության ապահովման, արտակարգ իրավիճակներում դրանց դիմակայելու պատրաստության միջոցառումների գործընթացներ են, որոնք նախապես պլանավորվում են՝ հաշվի առնելով արտակարգ իրավիճակների տեսակը, չափը, տարածվածությունը և հավաքածուի նկատմամբ դրանց վնասակար ազդեցության բնույթը: Տիրապետող կազմակերպությունում տարահանման նախապատրաստման և կատարման աշխա-

տանքներն իրականացնում են տիրապետող կազմակերպության համապատասխան մասնագետները՝ կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանի կամ ժամանակացույցի հիման վրա: Հավաքածուի տարահանման միջոցառումների պլանավորման և իրականացման պատասխանատուն տիրապետող կազմակերպության ղեկավարը՝ քաղաքացիական պաշտպանության պետն է:

4. Ելնելով արտակարգ իրավիճակների հնարավոր ծավալի, սպառնալիքի տարածքային չափերից՝ հավաքածուի տարահանումը կարող է լինել մասնակի կամ ընդհանուր՝

1) մասնակի տարահանման է ենթակա առավել արժեքավոր հավաքածուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գրավոր հուշարձանները և արժեքավորված փաստաթղթերը.

2) ընդհանուր տարահանման է ենթակա հավաքածուն ամբողջությամբ:

5. Անվտանգ տարածքները և դրանցում գտնվող պահպանման կազմակերպությունները նախապես ընտրվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից՝ համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ, և հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

6. Լիազոր մարմինը նախապես համապատասխան պայմանագիր է կնքում ընտրված պահպանման կազմակերպությունների ղեկավարների հետ: Պայմանագրերի նախագծերը լիազոր մարմնի կողմից նախապես՝ աշխատանքային կարգով, հնարավոր սեղմ ժամկետում համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

7. Ելնելով տիրապետող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանից կամ ժամանակացույցից՝ տիրապետող կազմակերպությունը պետք է ձեռնարկի միջոցներ ու կազմի պլաններ՝ արտակարգ իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության և դրանից պատճառած հետևանքների վերացման համար:

8. Արտակարգ իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության պլանավորման ժամանակ կիրառվում է փուլային մոտեցում՝

1) ռիսկերի գնահատում՝ տիրապետող կազմակերպության և հավաքածուի համար վտանգավոր գործոնների հայտնաբերում.

2) կանխարգելիչ միջոցառումներ՝ միջոցառումների իրականացում, որոնք հնարավորինս կբացառեն կամ կնվազեցնեն վտանգը.

3) պատրաստվածություն՝ տիրապետող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանի կամ ժամանակացույցի շրջանակներում տարահանման նախապատրաստման, արձագանքման ու վերականգնման գործողությունների մշակում.

4) արձագանքում՝ գործողություններն դրանց իրականացման եղանակներ, որոնք անհրաժեշտ է կատարել արտակարգ իրավիճակների ժամանակ.

5) վերականգնման աշխատանքներ՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տիրապետող կազմակերպությունում առաջացած վթարների վերացումնվնասված հավաքածուի վերականգնում:

9. Հավաքածուի տարահանման գործընթացիփուլերն են՝

1) տարահանվող հավաքածուիփաթեթավորումնտեղափոխում.

2) տարահանված հավաքածուի ընդունում և պահպանման ապահովում անվտանգ տարածքում գտնվող պահպանման կազմակերպությունում.

3) պահպանման կազմակերպությունից տարահանված հավաքածուն տիրապետող կազմակերպությանը վերադարձնելը:

II. ՏԱՐԱՀԱՆՎՈՂ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

10. Լիազոր մարմինը հավաքածուի տարահանման գործընթացն սկսում է իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման հիման վրա:

11. Լիազոր մարմնի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ ոլորտը համակարգող լիազոր մարմնի ղեկավարի տեղակալը, տիրապետող կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ, անցկացնում է խորհրդակցություն, իրազեկում է ստեղծված իրավիճակի մասին և ճշգրտում հավաքածուի տարահանման պլանը:

12. Տարահանվող հավաքածուի փաթեթավորման համար անհրաժեշտ արկղերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

13. Փաթեթավորմամբ պետք է ապահովվի հավաքածուի մեկուսացումը մթնոլորտային ազդեցություններից ու միկրոօրգանիզմներից և պաշտպանվի մեխանիկական վնասվածքներից, որի համար նախատեսվում է պատրաստել հատուկ արկղ:

14. Տարահանվող հավաքածուն փաթեթավորող և տարահանող պատասխանատու աշխատողների խմբի միջոցով տեղավորվում է փաթեթավորման արկղերում: Փաթեթավորման յուրաքանչյուր արկղում դրվում է նաև տվյալ տիրապետող կազմակերպության ղեկավարի կողմից ստորագրված և հաստատված հավաքածուի ցանկը:

15. Փաթեթավորման յուրաքանչյուր արկղ փակվում է իր կափարիչի վրա դրված փականքներով, որից հետո արկղերը կնքվում են տիրապետող կազմակերպության կնիքով, և մեկ աշխատանքային օրում կազմվում են արկղերի հանձնման-ընդունման ակտերը՝ երեք օրինակից: Արկղերի վրա դրվում են համապատասխան համարանիշեր, որոնք ունենում են երեք գույն՝ կարմիր՝ առավել արժեքավոր հավաքածուի համար, կապույտ՝ արժեքավոր հավաքածուի համար, կանաչ՝ մնացած հավաքածուների համար:

16. Տարահանվող հավաքածուի ուղեկցման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով առանձնացվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության վերակարգեր:

17. Տարահանվող հավաքածուի համար պահանջվող բացողիչ տրանսպորտային միջոցները հատկացվում են, և վառելիքաքսուքային նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Տարահանման ենթակա հավաքածուի բարձման և բեռնաթափման աշխատանքները իր կազմակերպությունում կազմակերպում է տիրապետող կազմակերպության ղեկավարը:

19. Տիրապետող կազմակերպության ղեկավարը տրանսպորտային միջոցին կցում է պատասխանատու մեկ աշխատող, ում տրամադրում է հավաքածուի հանձնման-ընդունման ակտերի երկու օրինակը՝ պահպանման կազմակերպությունում հավաքածուի հանձնում-ընդունումը ձևակերպելու համար:

20. Տրանսպորտային միջոցին կցված պատասխանատու աշխատողը, համաձայն տարահանման երթուղու, հավաքածուն տրանսպորտային միջոցով տեղափոխում է անվտանգ տարածքում գտնվող պահպանման կազմակերպություն:

III. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ԱՆՎՏԱՆԳ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

21. Պահպանման կազմակերպության ղեկավարը և նրա կողմից նշանակված պատասխանատու աշխատողները ընդունում են բերված հավաքածուն՝ համաձայն տիրապետող կազմակերպության պատասխանատու աշխատողի կողմից ներկայացված ցուցակի:

22. Տիրապետող կազմակերպության պատասխանատու աշխատողը պահպանման կազմակերպության ղեկավարի հետ միասին կատարում է հավաքածուի հանձնման-ընդունման աշխատանքները: Տարահանված հավաքածուի հանձնման-ընդունման ակտերը՝ երկուական, ստորագրում են պահպանման կազմակերպության ղեկավարը և տիրապետող կազմակերպության պատասխանատու աշխատողը: Տարահանված հավաքածուի հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը մնում է պահպանման կազմակերպությունում:

23. Տարահանված հավաքածուի արկղերն ստանալիս՝ պահպանման կազմակերպության ղեկավարն ստուգում է դրանց փականքների փայի կնիքների անվնասությունը և անձեռնմխելիությունը: Դրանք վնասված լինելու դեպքում պահպանման կազմակերպության ղեկավարը հանձնման-ընդունման ակտում կատարում է համապատասխան նշում:

24. Տարահանված հավաքածուի տեղափոխումն իրականացրած տիրապետող կազմակերպության պատասխանատու աշխատողն իր ղեկավարին է ներկայացնում պահպանման

հանձնված հավաքածուի հանձնման-ընդունման ակտի մյուս երկու օրինակները. որոնցից մեկը մնում է տիրապետող կազմակերպությունում, իսկ մյուս օրինակը տիրապետող կազմակերպության ղեկավարը ներկայացնում է լիազոր մարմին:

25. Պահպանման կազմակերպության ղեկավարը կազմակերպում է հավաքածուի տեղադրումը՝ որպես պահպանության համարնախատեսված անվտանգ տարածքներում:

26. Պահպանման կազմակերպության ղեկավարն իրականացնում աշխատողների միջոցով մշտապես հետևում է պահեստարաններում հավաքածուի համար անհրաժեշտ պայմանների պահպանմանը, որոնք ներկայացված են աղյուսակում.

Աղյուսակ

Նյութը (նյութերի խումբը)	Ջերմաստիճանը (^{o}C)	Խոնավությունը (%)
1	2	3
Մետաղներ	+18 - +20	մինչև 50
Ապակի, էմալ, կերամիկա	+12 - +20	55-65
Կիսաթանկարժեքքարեր	+15 - +18	50-55
Փայտ	+15 - +18	50-60
Գործվածք	+15 - +18	55-65
Կաշի, մագաղաթ, մորթի	+16 - +18	50-60
Ոսկոր, կոտոշ, կրիայի պատյան	+14 - +15	55-60
Թուղթ	+17 - +19	50-55
Յուղանկար	+12 - +18	60-70
Ա-սպիտակ լուսանկարչություն	+ 12	40-50
Գունավոր լուսանկարչություն	+5	40-50

27. Հայաստանի Հանրապետության կառավարությունն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ լիազոր մարմնի միջնորդությամբ, կազմակերպում է պահպանման կազմակերպությունների ուժեղացված հսկում:

IV. ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

28. Կոտակարգ իրավիճակների սպառնալիքի վերացման դեպքում, երբ հավաքածուին այլևս վտանգ չի սպառնում, հավաքածուն վերադարձվում է այն տիրապետող կազմակերպություն, որտեղից տարահանվել է:

29. Հավաքածուն տիրապետող կազմակերպություն վերադարձնելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

30. Պահպանման կազմակերպության ղեկավարը և տիրապետող կազմակերպության պատասխանատու աշխատողը տեղում կազմում են հավաքածուի վերադարձման մասին հանձնման-ընդունման ակտ՝ երեք օրինակից, որն ստորագրում են պահպանման կազմակերպության ղեկավարը և տիրապետող կազմակերպության ղեկավարը: Անհրաժեշտության դեպքում ակտում կատարվում է նշում արկղերի փայի կնիքների վիճակի մասին: Ակտի մեկ օրինակը մնում է պահպանման կազմակերպության ղեկավարի մոտ, երկրորդ օրինակը ներկայացվում է տիրապետող կազմակերպության ղեկավարին, իսկ երրորդ օրինակն ուղարկվում է լիազոր մարմին:

31. Տիրապետող կազմակերպության ղեկավարը հավաքածուով բեռնված տրանսպորտային միջոցի ժամանումից հետո կազմակերպում է արկղերի բեռնաթափումը, բացում է դրանք, համեմատում կազմված ակտի հետևանքներում համապատասխան տեղերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ